



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ԹՈՐԳՈՄ ԱՐԳԵՊԻՍԿՈՍՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Ասպետք

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 \* MURRAY HILL 6-0710

Archbishop Torkom Manougiun, Primate

Թիւ 22866  
Փետրուար 20, 1970

Հոգեշնորհ  
Տ. Վազգէն Վրդ. Քէշիշեան  
Հովիւ Ս. Յարութիւն Հայց. Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի  
Սառլթ Միլվորի.

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք 1970 Փետրուար 2 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հա-  
ղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 18ին զուամրուած Ձեր ժիական  
ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը,  
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձե-  
րուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կա-  
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական  
Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տուած ցանկին:

Ձեր տեղեկագրին մէջ կը յայտնէք թէ Յունուար 21ին զուամրուած ժիա-  
կան Խորհուրդի ժողովին մէջ ընտրած էք ժիական Խորհուրդի նոր դիւանը:  
Ասիկա հակահանոնական է ըստ Թեմական Կանոնադրութեան 28րդ յօդուածին,  
ուր յստակ կ'ըսուի. - "Ժիական Խորհուրդի անդամները կը շարունակեն իրենց  
պաշտօնը մինչեւ իրենց յաջորդներուն Առաջնորդին կողմէ հաստատուի եւ  
պաշտօնի անցնիլը": Կը յանձնարարենք որ այս սխալը չկրկնուի:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Դի-  
ւանի անդամոց, Թեմական պատգամաւորներուն եւ եկեղեցւոյդ ենթակայ մար-  
միններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

Տիարք՝ Բուսէլ Բայշեան  
Չարլզ Կատէմեան  
Հօյլի Կրիշ  
Իսահակ Հայտարեան  
Արմանտ Գէնտեան  
Գաբրիէլ Գաբրիէլեան

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՊԻՍԿՈՍՍ  
Առաջնորդ